



Ա. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺՆԵՐԻ ՆՈՐ ՅՈՒՑԱԿ

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ավելի քան 500 տարի մեծ դեր է կատարել արևմրտահայության հոգևոր-քաղաքական կյանքում: Այն իր նշանակությամբ եղել է երկրորդը Էջմիածնի կաթողիկոսարանից հետո: Ուստի և մեծ արժեք են ներկայացնում ինչպես պատրիարքարանի պատմությանը նվիրված նյութերը, այնպես էլ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի գավազանագրքերը:

Առ այսօր հայտնի են երեք այդպիսի ցուցակներ, որոնց ուսումնասիրությունն ու բնագրերի հրատարակությունը պարտական ենք Հայկ Պերպերյանին («Կ. Պոլսի հայ պատրիարքներուն գավազանագիրքը ըստ Մաղաքիա դպիր ձեվահիրձյանի» և «Կոստանդնուպոլսոյ հայ պատրիարքներու երրորդ անտիպ ցուցակ մը»)¹: Այս երեք ցուցակներից հնագույնը պատկանում է Մաղաքիա ձեվահիրձյանի գրչին և գրվել է 1713 թ. («Կարգ գաւազանագրութեան կաթողիկոսացն Հայոցս եւ պապանց Հռոմայեցոց եւ պատրիարգացն Յունաց եւ պատրիարգացն Հայոց Կոստանդնուպոլսոյ. ժողովեցեալ եւ շարադրեցեալ ի նուաստ եւ չնչին ծառայէ Մաղաքիա դպիրս Կ. Պոլսեցոյ, ի Կ. Պոլիս, ի փառս ամենամեծին Աստուծոյ ՌՃԿԲ (1713)»)²: Այս ցուցակը հետագայում շարունակել ու լրացումներ է կատարել Մաղաքիայի որդին՝ Սողոմոնը, հասցնելով մինչև 1753 թ. («Գաւազանագիրք կաթողիկոսացն Հայոց եւ պապաց Հռոմայեցոց եւ պատրիարգացն Կ. Պոլսոյ

Հայոցս եւ պատրիարգացն Յունաց: Արտահանեալ ի հնոց պատմագրչացն Հայոց, հաւաքեալ եւ շարադրեալ ի նուաստէ չնչին ծառայէ Մաղաքիա դպրէ Կ. Պոլսեցոյ ձեւահիրձոյ: Ի փառս ամենամեծին Աստուծոյ, յամի 1713 եւ Հայոց ՌՃԿԲ: Յորմէ յօրինակեցաւ սայ ի բուն շարադրութենէն Մաղաքիայի, ձեռամբ որդւոյ նորա Սողոմոն դպրի, ի վրասնս Հայկապենայց:

Յամի տեառն 1753 եւ Հայոցս ՌՄԲ սեպտեմբերի ԺԱ (11) ի Կոստանդնուպոլիս»)³: Երրորդ ցուցակը, որը նախորդներից անհամեմատ համառոտ է, ստեղծվել է Կ. Պոլսի պատրիարք Հակոբոս Սերոբյանի օրոք՝ 1848—1858 թթ.:

Կ. Պոլսի հայոց պատրիարքների մի նոր՝ չորրորդ ցուցակ է պարունակում Մաշտոցի անվան Մատենադարանի № 10721 ձեռագիրը (էջ 20ա—32ա), որը Կ. Պոլսին ու պոլսահայությանը նվիրված մի ժողովածու է, գրված 1799—1804 թթ. և պատկանում է Սարգիս Սարաֆ-Հովհաննիսյանի գրչին:

Այս բնագիրը մեծ արժեք է ներկայացնում երկու առումով: Նախ, Սարգիս Սարաֆ-Հովհաննիսյանը բավական հանգամանորեն է խոսում իրեն ժամանակակից պատրիարքների մասին: Երկրորդ, մեզ է ներկայացնում պատրիարքների հնագույն ցանկի հեղինակի անունը:

Իր այս ձեռագրում նա ընդօրինակել է հետևյալ նախագաղափար հիշատակարանը. «Օրինեալ է... Գրեցաւ կարքըս պատ-

րիարգաց ձեռամբ բազմամեղ և անպիտան ծառայիս Աստուծոյ տէր Սիմէօն իրիցու, ի թուին ՌԿԶ (1617)⁴, ի թագաւորութեան սուլթան Օսմանին, որ թախտէն ձգեցին բազում չարչարանօք Եւտի Խուլէն տարին և խեղդեցին և զսուլթան Մուստաֆայն դրին, ի պատրիարքութեան Յոհաննէս վարդապետին, ի դուռն Էտրէնոյ, ի թաղն Կաֆայու, ի նահանգին Սուրբ Նիկողայոսի Զմիռնացւոյ հայրապետին»⁵:

Ինչպէս տեսնում ենք, Կ. Պոլսի հայոց պատրիարքների առաջին ցանկի հեղինակը Սիմէոն երեցն է: Իսկ Սարգիս Սարաֆ-Հովհաննիսյանը այս և այլ աղբյուրների հիման վրա պատրաստել է իր նոր ցուցակը, որը հասնում է մինչև XVIII դարի վերջը—XXI դարի սկիզբը:

Ստորև ներկայացնում ենք Սարգիս Սարաֆ-Հովհաննիսյանի ցուցակը, իսկ վերջում, իբրև հավելված, տալիս ենք նույն հեղինակին՝ հիշյալ ձեռագրում գտնվող այն հատվածները, որոնք նվիրված են այս կամ այն պատրիարքին և փաստորեն գալիս են լրացնելու բուն գավազանագիրքը:

ՊԱՏՐԻԱՐԷՈՒՆՔ ՀԱՅՈՑ, ՆԱՏՕՂՔ ՈՐ Ի ՍՏԱՄՊՈԼ

Յովակիմ եպիսկոպոս, զոր ի Պոռուսայու ժողովրդօք եբեր սուլթան Մուհամմետն Ֆաթիհ, թուին հայոց ինն հարիւր տասն (1461):

Նիկողայոս եպիսկոպոս թուին ԶԻԷ (1478):

Կարապետ եպիսկոպոս թուին ԶԼԸ (1489):

Մարտիրոս եպիսկոպոս թուին ԶԾԸ (1509):

Գրիգոր եպիսկոպոս թուին ԶՀԵ (1526):
Աստուածատուր վարդապետ թուին ԶԶԶ (1537):

Ստեփաննոս վարդապետ թուին ԶՂԷ (1548):

Տիրատուր կաթողիկոս Սաայ Ռ (1551):
Յակօբ եպիսկոպոս թուին ՌԺԷ (1568):

Յօհաննէս եպիսկոպոս թուին ՌԻԲ (1573), Համթեցի:

Թումա եպիսկոպոս Գաղատացի ՌԼ (1581), որ ի հարսանիսն սուլթան Մուրատին գնաց՝ հանդերձ քահանայաւիւր:

Սարգիս եպիսկոպոս Զէյթունցի ՌԼԶ (1587):

Յօհաննէս եպիսկոպոս թուին ՌԼԸ (1589):

Ազարիա կաթողիկոս Սաայ ՌԻ (1591):
Սարգիս եպիսկոպոս ՌԻԱ (1592):

Մելքիսեթ քահանայապետ և կաթողիկոս Էջմիածնի ՌԻԱ (1592):

Գրիգոր վարդապետ Կեսարացի ՌԾԴ (1605):

Խուլ Յօհաննէս վարդապետ Ըստանպօլցի ՌԾԸ (1609):

Գրիգոր վարդապետ Կեսարացի դարձեալ ՌԿԱ (1612):

Խուլ Յօհաննէս դարձեալ ՌԿԶ (1617):

Գրիգոր վարդապետ Կեսարացի դարձեալ ՌՀ (1621):

Զաքարիա վարդապետ Վանեցի ՌՀԵ (1626):

Խուլ Յօհաննէս վարդապետ դարձեալ ՌՀԸ (1629):

Զաքարիա վարդապետ դարձեալ ՌԶԵ (1636):

Դաւիթ եպիսկոպոս Արևելցի ՌԶԸ (1639):
Կիրակոս վարդապետ Արևելցի ՌԴ (1641):

Խաչատուր վարդապետ Սեբաստացի ՌՂԱ (1642):

Դաւիթ եպիսկոպոս դարձեալ ՌՂԱ (1642), ի նոյն ամին:

Աթոռակալք:

Դաւիթ եպիսկոպոս դարձեալ ՌՂԹ (1650):

Աթոռակալք դարձեալ:

Եղիապար վարդապետ կամօք աթոռակալացն ի նոյն ամին ՌՂԹ (1650):

Յօհաննէս վարդապետ Մուղնեցի ՌՃԱ (1652), կամօք Փիլիպպոսի քահանայապետին և կաթողիկոսին:

Աթոռակալք դարձեալ:

Թօմայ վարդապետ Հալեպցի ՌՃԶ (1657), զոր ըսպարիսն աթոռակալքն:

Մարտիրոս վարդապետ Քէֆեցի ՌՃԸ (1659):

Ղապար վարդապետ Սեբաստացի ՌՃԹ (1660):

Յօհաննէս վարդապետ Թիւթիւնճի ՌՃԺԲ (1663):

Սարգիս Թրակացի ՌՃԺԳ (1664), վարդապետ:

Թիւթիւնճին դարձեալ ՌՃԺԴ (1665):

Սարգիս դարձեալ ՌՃԺԶ (1667):

Ստեփաննոս վարդապետ Մեղրեցի ՌՃԺԹ (1670):

Յօհաննէս երեց Ամասեացի Կաղ ՌՃԻԳ (1674):

Անդրեաս երեց Ըստանպօլցի, ձեռննէմ Վերտիլէնի կոչեցեալ ՌՃԻԴ (1674):

Կրպօ երեց Կեսարացի ՌՃԻԵ (1676):

Սարգիս աշխարհական, լետոյ երեց եղև և մեռաւ ՌՃԻԸ (1679):

Կիպօ դարձեալ ի Մարտիրոս Քէֆեցւոյ սնագլուխ եղև, ՌՃԻԹ (1680):

Թորոս երեց Ըստանպօլցի՝ Խ (40) օր ՌՃԼ (1681):

Կրպօ դարձեալ. յեղիապարու կաթուղիկոսէ եպիսկոպոս եղև ՌՃԼ (1681):

Եփրեմ վարդապետ Արևելցի ՌՃԼԳ (1684) յօգոստոսի 25:

Թորոս երէց դարձեալ ՌՃԼԶ (1687):

Խաչատուր երէց ձկեցի յԼստանալայ ՌՃԼԷ (1688):

Կրպօ եպիսկոպոս դարձեալ՝ ի նոյն ամին ՌՃԼԷ (1688):

Թորոս երէց դարձեալ աշխարհականօք վեքիլ, ի նոյն ամին ՌՃԼԷ (1688):

Սախաօղլու դերձակ աշխարհականօք ՌՃԼԸ (1689):

Շահին համամձի վեքիլ երիցօք ՌՃԼՅ (1691):

Մատթէոս վարդապետ Կեսարացի Սարը կոչեցեալ. ՌՃԼՍ (1692), որ յետոյ կաթուղիկոս եղև Սապ և ի ՌՃԾ (1701)-ին առաջնորդ եղև Երուսաղէմի և յետոյ ի քիւրէկն դրին և ապա ուրացաւ և փախեալ ի Հոմ: Եփրեմ դարձեալ ՌՃԼԳ (1694):

Մելիքսեթ վարդապետ Սուպիի շալիր ՌՃԼԵ (1698) մայիսի 16^օ:

Մխիթար վարդապետ Քիւրտիւստանցի ՌՃԼԸ (1699) յուլիսի 23:

Սուպիի դարձեալ ՌՃԼԹ (1700) դեկտեմբերի 4:

Եփրեմ դարձեալ ՌՃԾ (1701) սեպտեմբերի 1:

Եւսեփ վարդապետ Եսկկացի, Վերուսաղէմ ի միասին էառ ՌՃԾԱ (1702) փետրուար:

Գալուստ վարդապետ Կայծակ կոչեցեալ ՌՃԾԲ (1703):

Ներսէս վարդապետ Պալատցի ՌՃԾԳ (1704):

Աւետիք դարձեալ ի նոյն ամին ՌՃԾԳ (1704):

Մարտիրոս վարդապետ Եսկկացի Քիւրհանձի կոչեցեալ ՌՃԾԵ (1706) փետրուարի ԺԱ (11), որ եղև եպիսկոպոս ի վերա Ըստանալայ ի Սարը կաթուղիկոսէն Սապ:

Միգայէլ երէց Խարբերդցի ՌՃԾԶ (1707), նըստաւ վեքիլ Աւետիքին և ՎՄարտիրոսն և ՎՍարըն դրին ի քիւրէկն ՌՃԾԵ (1706):

Սահակ վարդապետ Ակնցի ՌՃԾԶ (1707) յունվարի 22:

Յօհաննէս վարդապետ Իվմիրցի ՌՃԾԶ (1707) սեպտեմբերի 25:

Սահակ դարձեալ ՌՃԾԵ (1708) դեկտեմբերի 30:

Յօհաննէս վարդապետ Կենձեցի ՌՃԿԳ (1714) մարտի 26 նստաւ:

Յօհաննէս վարդապետն երանելի՝ որ էր Բաղիշեցի ՌՃԿԴ (1715) սեպտեմբերի Է (7) նըստաւ: Սա դարձեալ բաժանեաց Վերուսաղէմն ի Կոստանդնուպօլսոյ:

Յակօք վարդապետն Ակնցի՝ գիւղիւ Ջիւմառացի, Նաթօլի կոչեցեալ. հեղինակ բաւում գրեալն, յատուկ անուամբ Աստուածաբան կոչեցեալն, աշակերտ վերոգրեալ Բաղիշեցոյն: Յետ մահուան երանելոյն նըստաւ սա ՌՃՂ (1741) փետրվարի 25^օ:

Պրօխօրոն վարդապետ Սիլիստրեցի, նուիրակ Երուսաղէմի, ՌՃՂԸ (1749) մարտի 26, նստաւ յօրն Վատկի, Չ (6) օր ժառանգեաց, յետ Չ (6) աւուրց նոր կիրարկէի շաբաթի օրն քչեցին:

Մինաս վարդապետ Ակնցի՝ առաջնորդ Մշու Սուրբ Կարապետու ՌՃՂԸ (1749), որոյ վեքիլ նըստաւ Յարութիւն վարդապետն Պալատցի, մինչև բերին ՎՄինասն յԱրպուժայ, որ եմուտ ի Ստամպօլ ՌՃՂԸ (1749)-ին և ժառանգեաց պաթոն:

Գէորգ վարդապետ Ղափանցի, ՌՄ (1751) յունվարի ԺԴ^օ (14), սակս Վի Վեքոյգրեալ Մինաս պատրիարքն կաթուղիկոս արարին ի Սուրբ Էջմիածին:

Յակօք Աստուածաբանն դարձեալ, որ եղեալ էր պատրիարք Երուսաղէմի և եբեր Վնա յԵրուսաղէմէ Եաղուպ աղան Վիետ իւրն և նստոյց յաթոն իւր ի Կոստանդնուպօլսոյ վերստին ՌՄԱ (1752) մայիսի 16:

Գրիգոր վարդապետն ծայրագոյն և ոչ եպիսկոպոս, ՌՄԺԳ (1764) մայիսի 13, ի մէջ բազմահաւաք եկեղեցոյն Սուրբ Աստուածածնի հաւաքելով բազում եպիսկոպոսներ: Յակօք Աստուածաբանն (նուապեալն ի Վօրոյթենէ և տկարացեալն ի վաղեմեալ հիւանդութենէ և անճարակ լինիլն ի դեղօրէից և անյոյս լեալն ի շահաւէտ խոտեղինաց և ձեռնանահանջ գոյն ի ճարտար բժշկաց) ինքնին յօժարութեամբ և մեծաւ օրհնութեամբ ՎԳրիգոր վարդապետն կարգեաց ի տեղի իւր պատրիարք (որ սա աշակերտ Թէոդորոս պատրիարքին Երուսաղէմի և էր վեքիլ իսկ Երուսաղէմի) և ինքն նստելով և Վտկարութիւն իւր հոգալով անցոյց Վնակաւ մնացեալ կեանքն: Եւ տրտմութիւն և տխրումն բազում եղև ժողովրդեանն աննախանձից, Վասն հոգևոր հօրն մերոյ հրաժարելոյն յաթոնոյն և կաթօգին առնելոյն Վկնի սուրբ հետոց իւրոց:

Չաքարիա վարդապետն Կաղուանցի և նուիրակն Էջմիածնի, որ յայսմ ամի երկրորդաբար եկն իշխանութիւնն նուիրակութեան ի կաթուղիկոսէն, Վոր նոր ըվսեալն էր եկեղեցին սրբոյն Գէորգեայ Վնուիրակութիւն և արարին պատրիարք Կոստանդնուպօլսոյ յամի Տեառն 1773 և հայոց ՌՄԻԲ (1773) նոյեմբերի ԻԹ (29), յաւուրն ուրբաթու, մեծաւ ժողովիւք լեկեղեցին սրբոյ Աստուածածնին ի Ղումդաբուս մեծամեծ իշխանաց ներկայութեամբն և քահանայից և բազմաց ժողովորոց և էսնաֆից ծերագոյն

անձանց անդ եղելովքն ընտրեցին և հաճեցան պատրիարքութիւն ստրա պատկան, վկնի բազմաց քննութեանց, Կոր ոմանք Կայս և ոմանք Կայլըս յառաջադրէին: Եւ առաջին պատրիարքն Գրիգոր հրաժարեալ իւր կամօքն գնաց հանդարտանալ ի Յիսկիւտարու վանքն վասն բազում նեղութիւնս կրելոյն յանպզամացն մերոց ազգաց ի յըսկըպանէ պատրիարքութեան հետէ մինչև ցայս կէտ, Կի ի կողմանէ տէր Մափուէլէ որքան վիշտս կրեաց, Կայս և կամ յառաջին յուսահողի պատրիարքն աստուածաբան, մի ըստ միոջէ գրէն երկար լինի և անօգուտ ամենևին, որ այնպիսի անպզամ արարքն չարք և գործքն դիւականք հանդերձ ընկերօքն իւրովք չարաց: Եթէ պատմիցի երկարօրէն, լինի թէ չար օրինակ լինիցի այլոց առ չարութեան ճանապարհըն նկրտողաց, որ այժմ ի յաքսորս է ի յԱմասիա, ընդ Աքրահամ առնն խաբու օղանոյն Գրիգոր պատրիարքն: Եւ ի յառաջ քան յաւուրսս յայտոսիկ քանի մի անձինք թիկնապահութիւն իմն արարեալ աղաչեցին վասն աքսորեալ անձանցս այսոցիք ապատման, սակս անտեղեակ գոյոյ իւրեանց չարութեան առանցս այսոցիկ: Եւ պատրիարքն Գրիգոր անյուր աղաչանացն նոցա եղեալ և արանցն այնոցիկ գլխաւորոքն կասեցուցեալ Կնոսա ի խնդրոցն իւրեանց, ոչ ետ վիդիսն նոցա և վկնի սկսաւ ինչ աւուրց ի կողմանէ աքսորելոց եղեալքն անկեալք յայժմու խաբմախամի որդւոյն յԱմէտ պէկ կոչեցելոյն, որոյ տունն ասացին լեալ ի Շէպատէ պաշի կողմն, և նա առ պատրիարքն ընձալ առաքեալ քանի մի անգամ ևս չեղև: Եւ իւր հօրէն ևս անյոյս եղեալ վասն ապատման աքսորելոց արանցն, խոխայր վասն Գրիգոր պատրիարքն և իրեարս որոնէր ի պատրիարքն ազլլ առնելոյ և պատրիարքն լըուեալ և տեսեալ ըպթնամու իւրոյ չար միտքն, ինքնին հըրաժարեալ յաթոռոյն ետ ծայրագոյն նուիրակին սրբոյ Էջմիածնի պատրիարքութիւն և ինքըն յիւսկիւտարու վանքն նըստեալ այժմ հանդարտ առանց վբաղանաց, որոյ վերջն Աստուծոյ յանձին: Իսկ պնութենական բերմանց մերոցս չարաց և վատթար արանց ի սկզբանէ հետէ այսպես էր, այնպես առ այս վարդապետս արարին և որպես առաջնոյ առնն Աստուծոյ և պատրիարքն հանգուցելոյ (որոյ յաջորդեաց Կայս) արարին և գործեցին Կչարիս բազումս, մինչև կախեցմանն գործեցին Կզուն. իսկնգարիչքն հայոց և վատ անձինքն իսկ մերոյս ազգի և այնպիսի գերազանց սոռն սրբոյ ոչ ինպեալ բազում տրտմութեամբ և Կանապան իիւանդութեամբք մինչև մաշարայական արտիւք իջուցին վնա ի գերեզման, որոյ վասն այժմ կատարելոց է այն

մարգարէութիւն Ամովսայ թէ ոչ տաց սով հացի և ծարաւ ջրոյ, այլ տաց սով լսելոյ Կբան Տեան, Կի այնպիսի աստուածաբանութեան մեծ վարդապետին եկեղեցւոյ հատուցին ի տեղի բարւոյ Կչար, և փոխարէն հայրական խնամոցն նորին անառակ որդւոց ցուցին Կբարս: Չայս այսքան, որքան վկնի նորին եղելոյն, բայց Կինչ այլ ևս երկարեցին Կբանս և միայն Կայս ասացից ըստ գերյարգելի վարդապետին Յօհաննու թէ՛ Չի հարքըն մեր ամենեքեան այս աղէտիւրս մաշեցան: Քանզի նախանձալլուկ անձանց նախկինքն որպէս հատուցին անցեալ հարքըն սրբոց և Կայն կատարեցին սոցա ըստ տեսնական բանին առ իրեայս թէ՛ Հարքն ձեր կոտորեցին Կմարգարէս և հալածեցին ըպտուրքս և դուք ևս լցէք Կչարի հարքըն ձերոց և Կիս ի մահ մատնելով: Եւ թէ Կիս հալածեցին և Կձեկ ևս հալածեցին: Այսպես ասաց Փրկիչն առ աշակերտսն, քանզի վասն առնս այսորիկ տգէտք և անպիտան բարւոք մարդիկք և չար անձինք բազումս հալածակեցան ի կեանս իւր և վկնի մահուան: Բայց գիտուն կարծեցեալ անձինք և կշռով կենցաղավարօղ արք ևս ոչ անաչեցեալ ամենին արեացն երանելոյս և չԿանգիտեալ այնքան աստուածաբանական գերազնիւ ջընորիացն և ամենահարուստ գիտութեան իմաստիցն երանելոյն և առատահեղ և Կերձափօս ատենական խօսիցն սրբոյս, որոյ վարդապետութիւն էր արդիւնաւոր ըստ ամենայնի և բերրեղ և հեղինակ իսկ բազում գրեանց աստուածաբանականաց և մեկնութեանց սրբոց գրեանց և այլոց բարոյական բանից սրբոց վարդապետաց եկեղեցւոյ տեղեակ և անշիճանելի ջառ մերոյս եկեղեցւոյ սրբոյ և այլովք գերազանց յատուկեամբք Կերձացեալ, Կորոց եթէ ախիցի աստ երկար լինի բանս մեր, Կի դիտաւորութիւն մեր է ծաղկաքաղ պատմել Կչըքնաղ գիտութենէ երանելոյս և յայտնի առնել Կչարութենէ նախանձաբեկ բարուցն արանց, որք մախագեալք Կարեգակնափայլ վարս նորա ստուերաւ ստութեան իւրեանց կամէին խաւարեցուցանել: Վասն Կի յոմանց Կարիս բազումս կրեաց իսկ, որոց բարերարութիւնս յոգունս արար միշտ ըստ յայնմ Պետրոսի որ բամբասեալ և ոչ փոխարէն հատուցանէր: Եւ նման Փրկչին խնդութեամբ տանէր նախատական բանիցն թշնամեաց և ըստ Պօղոսի կամէր սակս իւրոյ ազգին աշխատիլ և բազում գրեանս իբրև կերակուր ջամբել տալ մանկանց իւրոյ ազգին և թիւնաւոր խայթածոց օձանդման թշնամեացն համբերութեամբ տանէր և բարերարութեամբ Կչարայլուկ բարս նոցա յաղթեր և Կկայծակունս իրոյ կուտէր ի գլուխ նոցա: Քանզի այնքան էր տենչըն սորա, որ ներ Կբաղմանց

յոգունց վիւր հոգևորական գործն յառաջ տանէր և ինէր բազմաց գրեանց հեղինակ և վասն թողոյ վկնի իւր յիշատակ բարի անջնջեցեաց: Բայց անպատեհ անյոյնի որք ի յատելութեան ունէին վայս վարդապետս, սորին նաև յոյն խաւար թուէր նոցա: Եւ վատթար պրուցատրութեամբ իւրեանց և դատողութեամբ բամբասէին և քամահող վեհագոյն առնա այսորիկ ինէին, զոր յԱստուծոյ Աստուած կոչեցեալ էր ըստ յայնմ թէ վԱստուածս ժողովորեան քո մի բամբասեցես և դատելովն իւրեանց յափըջտակօղ դատաստանին ինէին Աստուծոյ և չարակնեալ պառատաբաշխութիւն հեղման սրբոյ հոգւոյն առ վարդապետս այս, որ էր նիւթս պուրճութեան մերում ազգի, դարձաւ ցանկն ի նիւթ չարութեան և նախանձու: Եւ վասն ոչ ըստ ախորժեանց իւրեանց վարդապետելոյ անպատեհար տրտնջէին, և ձրկտէին խնու պաղբիւրն պարգևաց նորա և քամահէին վերկն աշխատանաց երանել այս և խարխաբմամբ ընթանալով ի ճանապարհս անհարթ ստույթեան գծէին և ի վիսն կորստեան և բամբասանաց անկանէին: Եւ ոչ պատելով գերազնիւ այրս այս ի ծաղր և ի կատականս շարժէին վայլ ազգ քրիստոնեայս, որոց միշտ ծիծաղետոյ լինեալք զոչ պատելով պիտունս ազգի մերում: Այսպէս ոմանց է սովորութիւն չար դնել գիտնոց աւուն կեղտ, քանկի գերաշնորհ այրս այս միշտ արծարծէր պարգևսն հոգւոյն սրբոյ, զոր յիովին ընկալեալն էր և պթանքարն շնորհեալ փնքեան ոչ գաղէր ի վարջամակի, այլ աճեցուցանելով արդիւնաւորապէս բեղմնաւորէր և շահէր նոքօք պաւակունս հոգեւորս ըզգրեանս սուրբս յեկեղեցուջն Քրիստոսի, զի բան վարդապետութեան նորա միշտ նրկուն առնէ վերերեկոյնաց մոլորութիւն և յաղթողական առաքելութիւն նորա օրստօրէ պարտեալ նրաճէ պիտամտական թիւրակրօն արանց զվիճմունսն և ըզլուսաւոր հետ նորա՝ հորդէ յարածամ ի ճանապարհն ուղղութեան անտարակոյս ընթացուցմամբ վարդապետս, բանիւք և վարդապետութեամբ նորա պրոփաւորեալս, զի իբրն պատական ծաղիկ միշտ բուրէր պանուշահոտութիւն վարդապետութեան նորա: Քանկի ազնիւ էր իմաստութիւն և անճառնի պիափաքն երանելոյն, զի գերահրաշ վարդապետութիւն սրբոյս խոցոտէին զսիրտն նոցա, որոց մեծագոյն էր ատելութիւնքն ընդ սա, և վայլ գերադրական գործքն մի ըստ միողէ ասելուն անկար գոյով ինձ լռեցից, զի երանելոյս գիտութիւն ի գրեանցն իւրոց իբրն ի յայտնի հալելոջ երկի աննախանձից և ի ձեռն տեսութեան աչաց ամենեցունց է բացայայտ: Քանկի պատմելն զգերապանցութենէ ուրու-

մըն յալնժամ լինի, յորժամ չիցէ յայտ, քանկի առաւել քան վամենայն գիտունսն էր պերճացեալ և ի մերումս ժամանակի վկնի սրբոց հարցն մերոց լուսաւորիչ մեծ յայտնեաց Աստուած յազգի մերում, որոյ յիշատակն օրհնութեամբ է և եղիցի: Բայց Չաքարիայս այս վկնի եօթն տարւոյ և լման կիսոյ, յամի ՌՄԼ (1781) մայիսի ԻԹ (29) հանեալ ի պատրիարքութենէն Պուռնայ առաջնորդ արարին հրամանաւ արքային և նորին եպիսկոպոսն բերին աստ պատրիարքացուցին, զորոյ պատճառն յայտուր պատմեցեալ եղև ի մէնջ ի գործս վրէժխնդրութեան Չաքարիայի ընդ հետեւոյնցն մերոց:

Յօհաննէս վարդապետն եղև պատրիարք Կոստանդնուպօլսոյ յամի տեառն 1781: ՌՄԼ: յամեանքն յունիսի Բ (2), 1195¹⁰ ձեմապիւ-ախըր 21, յաւուր չորեքշաբթի երեկոյին 8 բերին ի Պրուսայու յեպիսկոպոսութենէն իւրմէ միւլաշըրիւ և եղին պատրիարք աստ ժամ իբրն տասն եկն ի դրանէն Բղեշի Իվէթ Մահամմատ փաշային (որ էր ինքն յԱմատանցի և ի Բաբիլօն ժամանակ ինչ կեցեալ գոյով Երուսաղէմայ միաբան) և նստաւ յաթոռն Կոստանդնուպօլսոյ: Եւ սա շինել ետ զմետիպանան ճաղսն վասն հետեւոյնցն մերոց և զմկրտութիւնն վերացոյց առնել յեկեղեցին մեր և անկուրթ թողել ետ զմանկունսն նոցա և այլ պատիծս նոցա ըստ արարմանցն առաջնոյն էր, զի և սա խիստ քան զմիւսն եղև ընդ նոսա: Բայց ոչ կարաց հաճոյանալ յաչս ազգին և ոչ սիրեցաւ ամենեկին, զի միշտ շըշուկ լինէր աստ և անդ ոչ ուզել վայս պատրիարքն և պառաջինս խնդրէին, մինչև որ յամեանն ղեկտեմբերի ԺԹ (19), յաւուր կիրակի Սրբոյն Յակոբայ ի յըկտման պատրիարքին, վերավազեցին ի վերա պատրիարքին ի մէջ եկեղեցւոյն և նա յարուցեալ յաթոռոյն փախեաւ դէպ ի պաշարանն և անդ թագեաւ ի խոր ինչ տեղի դարանոջ պահարանին և քանի մի կեսարացի սըրիկաք անցեալ պթախթափերտէն, որոնցին ի պատրիարքարանին և ոչ գտին: Եւ յետոյ հինգ անձինք ի նոցանէ թին յղեաց և վկնի քանի մի աւուր ապատեաց և զպէրաթն նորոգեաց և մուխարրէր եղև կրկին և այնպէս գնաց և վարեցաւ ժամանակ ինչ և չեղև հնար ինքն վինքն սիրել տալոյ ազգին, զի եսական իմն ունէր պնութիւն իւր պատրիարքս այս: Վասն որոյ չենք ուզեր ասելով բազմաց՝ մինչև հասուցին այն կետն, որ ի ՌՄԼԱ (1782) թուին, յամեանն մարտի ԻԳ (23), յաւուր աւագ չարեքշաբթի ալ առնել ետուն և յղեցին յաթարս ի խառթալ նստիլ, մինչև յաջորդն եկեալ ըստ կամացն յիցէ առ ուր և կամիցի: Եւ յաւուր րաւագ շաբթի երեկոյին զՖերմանն յղեցին միով

միւլաշըրիւ և քանի մի արամբ մեր ազգէն ի Պրուսա՝ առ ի բերել անտի զՁաքարիա պատրիարքն առաջին, որ և բերին վկնի ութն աւուր միւսոյն ալ լինելոյն և նստաւ յաթոռն ի Կոստանդնուպօլիս յաւուր հինգ-շաբթի ժամ իբրև եօթնին բազմաւ հանդիսիւ, սրբոյ յարութեան Ե (5) երրորդ օրն:

Ձաքարիայն, որ Ազգասէր կոչեցաւ, կըրկին նստաւ յաթոռն Կոստանդնուպօլսոյ պատրիարք ՌՄԼԱ (1782), յամենան մարտի ԼԱ (31), վկնի տասն ամսոյ ալ լինելոյն: Եւ առաջին վկեր Իպէթ Սուխամէտին կապայ հազաւ: Եւ փաշայի խօսակցիւն ընդ պատրիարքին այս է, զի ախանաւ տես եղէ, զի ի մտանելն առաջի վկերին ասաց փաշայն թէ՝ Բարի եկեր: Եւ նա խոնարհեալ երկիր պագ և զծունկն և կանգնեցաւ բարև ըմբռնամբ ձեռաց, որ և ասաց վկերն վկնի քէֆն հարցանելոյ և պատրիարքն շնորհակալ լինելոյ, թէ քեզ հայիմ թէ որպէս կառավարելոց ես զՖուխարէ ռալէն մեծապօր թագաւորին և ազգն քո, զի խնդրուածովք միլլէթիդ և մեծահրամանաւ արքային ահա եղեր փաթրիք և քեզ յանձնեաց զազգն քո, վասն որոյ շահելոց ես վնոսա՝ չլինի թէ գլուխ ցաւեցուցանելոյ առ ինք լինիցիս արքային, ուստի բարով վայելեցես զիշխանութիւն թագաւորական, որ առ քեզ հիւմայեւ արար: Եւ հազոյց կապայն և ել անտի երկրպագմամբ և գնաց վկեր քեախիպի օտայն, որ և անդ նստուցին շաքարիւ և սրջիւ պատուեալ վնոյն բանն երկրորդեաց և ել գնաց Ռէյիզ Էֆէնտուն օտայն և անդ նոյնպէս, յետոյ Չավուշ պաշու օտայն ևս անդ այնու կերպիւ, արձակեցաւ և էջ նստաւ ի ձի վարդարուն սարօք փառօք, վարդապետօք, քահանայիւք և երեք արք կապայիւք ընդ նմա, և գալն խառնողայ իլիմանու կանգնեցուցին ի սուլթանի խօնախէն քիչ մի զի տեսցէ տուլթանն զպատրիարքն մեր, զի այնպէս հրաման արարեալ էր ինքն: Եւ անտի եկեալ նստաւ յաթոռն, որ և բարեաւ վայելեցէ և կարողացուցէ հանդերձ խաղաղութեամբ և սիրոյ: ամէն:

Եւ ի ՌՄԻԼ (1799) մարտի ամսոյն հիւանդացաւ և ի բժշկաց ոչինչ օգտեալ մեռաւ յուծմամբ որովայնին մարտի ԺԱ (11), յաւուր ուրբաթի երկրորդ շաբթի մեծի պասի քառասնորդաց և վկնի օրին յաւուր շաբաթու Կիւրեղեանց տօնին թաղեցին ի նորաշէն եկեղեցու գաւթին Ղուրուչէշմէի և արար պատրիարգութիւն քան և հինգ ամ, երեք ամիս և տասն և մէկ օր:

Էր սա խիստ ծանրակալ և դժնահայեաց և յոյժ պատուաւեր, մինչ զի աշակերտքն և հետնողքն իւր միւրապի արք բազումք իբրև ըպտուրք ոմն և իբրև զԱստուած պատուէին և պատուեալ տալին հասարակաց և անտես

արարեալ էին հասարակաց և գռեհեաց և համայն ժողովրդականաց և միայն ապնուաց և հարստաց էր տեսութիւն, վասն այն հասարակութիւն փափաքէին և հոգւոց հանէին առ ի տեսանել գոնէ ի յեկեղեցուց թէ ի քառուկին և թէ ի յեկանելն դուրս առ ի երթալ ձիօք անդ և աստ տեսանել փութային և իսկ այլանդակ իմն ցոյց ունեւոյ յերեսն մապաշատ և բըրդօտ և երկայնահասակ և ի քայլելն և ի ձի հեծեալ երթալն գլուխն ի յետս թեքեալ ընթանալոյ կուրծքն դուրս ունեւոյ և իբրև արձանեալ շինեալ իր մի էր, զի ինքնէն ոչ շարժէր, այլ յայոց ձեռքն շարժեալ լինէր և բանն և քարոյն այնքան խըրթին էր և նուրբ, ոչ յօղք հասկանալին և ոչ կարծի թէ ինքն: Եւ այսպէս վայելեցաք այսո այս և կոչեցաք Ազգասէր՝ վասն այն չէ թէ ինքն զազգն սիրէր, այլ ազգն զինքն սիրէր, քանզի անցեալ պատրիարքաց ոչ էին արարեալ նորա շատ մասին՝ մէկ մասին չափ պատիւ և յարգ, և կատարեցաւ մարգարէութիւն այն ի տորին ժամանակն, որ սով հացի և ջրոյ չգոյր, բայց միայն պանն Աստուծոյ լսելոյ գոյր նուապութիւն, զի այսո այս տարագիր արար զբազում գիտուն անձինս և աստ ի Պօլիս ոչ թողոյր զբանագետ վարդապետս և եղեալքն ևս թաքթաքուրք ջրջէին, որ և բազում նեղութեամբ և անկուրթեամբ զոմանս ի կենաց գրաւիլոյ պատճառ եղև որպէս ծայրագոյն նուիրակին Իսահակայ բազմիմաստ առն և Թրակացի Յարութիւն աստուածիմաստ առնն քարոյցի յԵրուսաղէմի նուիրակին, զորոց զոյն պատճառ եղև ի իւրմիրու կողմն թաղիլոյ:

ՀԱՎԵԼՎԱԾ

1

Ամբոսոյու գերահռչակ դպրատան վարժապետ Վարդան վարդապետի աշակերտ, երանելի Յօհաննէս պատրիարգին ձեռնադրած աշակերտքն կարգաւ են այտքիկ¹:

Նախքան վամենայն Թօմայ և Երեմիայ վարդապետքն:

Ապա հեղափոխի Յարութիւն վարդապետ և Յակօք վարդապետ Աստուածաբան:

Ապա Սահակն՝ որ Ահագին վերաձայնիւր՝ սակս ահագնապէս և փողաբարբառ քարոյցելոյն զբանն կենաց: Ապա Սարգիսն՝ կոչեցեալն Ընորիալի, և Աղամ վարդապետ, Յօհաննէս վարդապետ Ժամկոչեան, Պօղոս վարդապետ, Ստեփան վարդապետ և զՂապարն Պոնտոսեան, որ Անմարմին կոչիւր:

Ապա Յօհաննէս վարդապետ Սէտէֆձի օղլու: Գրիգոր վարդապետ Խուլի: Կարապետ վարդապետ Ճամպապեան: Նաւն Պետ-

րոսի: Աւետիք վարդապետ: Ապա Սամուէլ վարդապետ: Մանուէլ վարդապետ: Գեորգ վարդապետ: Պետո վարդապետ: Ղազար վարդապետ Մշակ: Յարութիւն վարդապետ Սանտալճը օղլու: Պետրոս վարդապետ Տիվրիկցի:

Ապա Աղաւնի Յովհաննէս վարդապետ և չորս սարկաւազ թողաւ. Մարտիրոսն, որ մնաց ի նոյնում, նաև Պետրոս Թերպի օղլուն, Պօղոս Ախրդորանն և Կարապետ Չիլիկիբեան, զորս այս երեքս Յակոբ պատրիարքն ձեռնադրեաց հաբեղայ:

2

Իսկ Յակոբ պատրիարքին աջակերպքն են այտքիկ, որք և ձեռնադրեալք ի նմանէ¹².

Նախ Աթանաս վարդապետն: Ապա Յօսէփ վարդապետ: Ապա Սահակ վարդապետ, որ և Ղեւոնդ: Կարապետ վարդապետ Պէպիւր օղլու: Եւ Ստեփան վարդապետ Պէյօղլուցի: Ապա Յօհաննէս վարդապետ Խոյնցի և Բարսեղ վարդապետ: Ապա Սէթն Տիվրիկցի (որ յառաջ փոքրատր Յարութիւն վարդապետ էր) ձեռնադրեաց և կոչեաց Գրիգոր վարդապետ: Ապա Սարգիս վարդապետ Կեսարացի: Եւ ապա վերջապէս ՎՄիգայէլ վարդապետն և ի վախճանի ունէր զայսոսիկ սարկաւագունս. ի դպրութեան Պաղտասար կոչեաց Գաբրիէլ և ի կենդանութեան արտելեալ սարկաւագունքն են սորա. տիրացու Սարկաւազ Մխիթար, որ և Գեորգ: Եւ Մաղաք Պալաթցի բաժակարբու այժմ: Եւ Խօթթովս Քէտիսի, և Մելքիսեղ սարկաւազ Պալաթցի, որ եղև ըստ աշխարհի: Տիրացու Արսէն դպիր Լանկացի և տիրու Գրիգորն Պալաթցի, որ սա ի գալն յեջմիածնայ՝ մեռաւ յԵթովպիայ, որ էր դպիր յորժամ ելն և եղև ըստ աշխարհի:

3¹³

Յամի Տեանն 1741 :ՌՃԼ: փետրվարի ամսոյն զգեցաւ կապայն պատրիարքական Կոստանդնուպօլսոյ Յակոբ եպիսկոպոսն Գաղատիոյ, Նալօղլու կոչեցեալն Ակնցի և գիւղիւ Ջիմառացի, և ընդ լինիլն իսկոյն առաքեաց ՎՍառաֆ օղլու Սարգիս վարդապետն համեղաքարոյ յառաջնորդութիւն ի տեղին իւր յԵնկիւրի քաղաք: Եւ ինքն սկըսաւ փոզ ազգին պանձնեալն ի Տեանէ հոգայ և զւերն Աստուծոյ, ըզպատուիրեալն ի նմանէ արծարծել զխիթ և ըզխութ, որ կայր ի մէջ ազգին, ի հիմանէ արմատախել և զսոսինձ սիրոյ կապոյն պնտացուցանել: Եւ զկարգարդութիւն երկուց վեհիցն յաջորդաքն իւրոց ՎԳրիգորին Երուսաղէմայն և

զՅօհաննիս Կոստանդնուպօլսոյ պատրիարքացն առաւել ևս հաստատել և մինչդեռ յայս գործ աստուածային պաղղեալ էր այս այս մեծիմաստ, յաւուր սրբոյ զատկի ի թըլին ՌՃԼԸ (1749) Սիլիստրեցի Պրոխորոն եպիսկոպոս, զոր քանի մի ամիս յառաջ եկեալ էր յԵրուսաղէմայ, համակամութեամբ երից արանց ի ծածուկ առեալ զիշխանութիւն պատրիարքական և զգեցեալ ըզկապայն առանց գիտութեան մեծամեծացն ազգին, եկն հանդիսիւ և եմուտ յեկեղեցին արքունի պաշտօնէիւք:

Եւ էր ծամ իբրև երեք և եփն յառաջ ժողովուրդք, թէ՛ Սէնի պիմէիլ¹⁴, մեք ունիմք պատրիարք Յակոբ (որ և ի նոյն օրն պատարագ մատուցեալ էր և ննջէր ի խցին յայնժամ) և կամէին վարել և չառնուլ յեկեղեցին: Յայնժամ արքունի սպասաւորք դրանքն խրճակեցան ի վերա նոցա և հարին զնոսա և ի բաց փանեալ մուծին բըռնութեամբ յեկեղեցին ՎՊրոխորոն:

Բայց յորժամ իմացաւ Յակոբ պատրիարքն ի քննոյ զարթեալ, թռեաւ իսկոյն և թաքոյց փնքն ի տան սահաթճի Իւսուֆին և մնաց անդ յաքար:

Իսկ յերկրորդում աւուր զատկի առաւօտն եկեալ Պրոխորոն յեկեղեցին և դարձաւ առ ժողովուրդն և կամէր խոսիլ ինչ և քարոզ ասել և ի բանալն զբերան, միաբան աղաղակել սկսան ժողովուրդք թէ՛ Իստէմէիլ¹⁵: Մանաւանդ այր ոմն պօղաչաճի բարձր ձայնիւ՝ Չենք ուզեր զայս մարդս պատրիարք մեզ, մենք ունիմք պատրիարք ՎՅակոբ վարդապետ: Եւ իսկոյն ի վեր ելին բազմութիւնք ի յոտին ասելով թէ՛ չենք ուզեր զայս, ըզՅակոբն կուզենք: Եւ ի յայսմ իրակուցեանցս որ իբրև ծով ծփայր ի մէջ եկեղեցւոյ և աղաղակն բազմանալոյ մարդկանց, յանկարծակի բացեալ եղև դուռն պահարանին և ելին անտի եկեղեցիք և չուխատարքն փաշային ասելի քան զերեսուն, որոց ոմանք շրջապատեալ ՎՊրոխորոնն տարին ի յառաջնորդարանն և ոմանք սկսան դէպ առ ժողովուրդն անխնայապէս և անողորմաբար զարնել և գանել ասելով. Քեաֆիր լէր սիզ փատիջահ ֆէրմանընա քարջը քօրտունուլ¹⁶: Եւ ոմանք հարկանողացն գոչէին՝ Վուրմայ¹⁷, և կամ՝ Նէ վուրուլեօսիւն¹⁸, և ոմանք՝ Էմիր շէրին, ալլահն Էմրինէ քաւըրլը¹⁹, և ոմանք՝ Վայ պաշըմ²⁰, և թէ՛ Վայ քօլու²¹: Եւ սկսան աղաղակաւ լալ և ողբալ և յիրաւի տեսաք զդառնակակիծ տեսարանս ան, յոմանց զգուխն պատառեալ և յոմանց թուքն խախտեալք էին ի տեղւոյն և ալք ալ կերպիւ մաղկըտային զփորձ առնուլն ի ճաշակ զփայտն և զտաճկիւնակն և սակայն ի յօրն աւագ ուրբաթի դէպ առ պատն եղեալ բարմախլիփցն մինն խորտակեալ էր վանս

բազմութեան ժողովրդոց և ոչ ինչ գոյր անդ առ ի յենուլ և ի միւս կողմն էր ցած իբրև կէս կանգուն և ունանք ոչ գիտելով զոչ լինին անդ ճաղին, սկսան մղել զմիմեանս դէպ առ այն կողմն, որպէս յերեկն և յեռանդն և սկսան թօթափիլ ի վերա միմեանց ի վայր անձինք քան փարիւրն աւելի: Եւ անդ էր տեսանել զբազմութիւն հեծողաց և հառաչողաց և անձանց իւրեանց զվայ կարողացողաց:

Այս գործ շփոթի էհաս յունկն [ս]ուլթան Մահամատ թագաւորին և հարցեալ զվէպիրն իւր թէ ինչ է պատճառն ազգին հայոց խռովութեան: Եւ նա չքմեղկա լեալ ասաց թէ ի խնդրոյ իւրեանց զխաւորացն փոփոխումն արարի բաթրիքի իւրեանց վասն այն կարծեմ խռովեալ են: Եւ ի կրկնելն արքային թէ այդպէս լինէր, վասն էր խռովեալ լինէին, և զնորն անգոսնեալ զհինն խնդրէին ոչ այդպէս՝ ալ առանց ենթադատման ձեր գլխոյն բան յառաջ բերել խնդրելով զիմ րայեն խռովէք ասելով, ձեռք դուրս ի սենեկն վարեալ զփաշայն գոլին շարժեալ է: Ստուգեցին պատմօղք ակնատեսք իբր: Եւ ի յերկնչիլ փաշային անդ իսկոյն եկեալ ի բնակարանն իւր և բերեալ զմեծամեծս ազգիս պատուիրեալ վալլ ոք ընտրել ի պատրիարքութիւն և յեօթներդդում օրն, յաւուր նոր կիւրակէի ջաբաթն իշուցին ըզՊրոփսօրոն ի Կեոմրիկն, նաւ նատուցեալ արտաշալած արար ի Սամսօսի բերթն: Եւ ի նոյն օրն զՅարութիւն վարդապետն խիաթեցին փոխանակ Մինաս վարդապետին Ակնեցոյ, որ էր առաջնորդ սրբոյ Կարապետու, որ էր յԵրվրում: Եւ բերին անտի և պատրիարքացոցն աստ: Եւ զՅակոբ պատրիարքն ի Պուռաս լղեցին առաջնորդութիւն: Եւ ի նոյն աւուրսն եկն թուղթ յԵրուսաղէմայ թէ վախճանեցաւ Գրիգոր պատրիարքն մեծ: Եւ վասն այն ժողով արարեալ իշխանացն, բերել ետուն զՅակոբ վարդապետն ի Պրուսայու և լղեցին ի յԵրուսաղէմ ինիլ անդ պատրիարք սրբոյ երկրին:

Բայց ի պատճառս բիւր արանց ումանց, զորս աղանդ ինչ սերմանէին ի մէջ ազգիս, որ և միշտ ըմբերանէր զնոսա սաստիկ բանիւք ի պատրիարգութեան և տեղի ոչ տայր նոցա արծարծել զայնրնոցաց շաւիղ այնոցիկ և հորդել, որ էր ի մէջ ումանց իշխանաց պալս ախտ, որոց թելարդութեամբն իսկ արար Պրոփսօրոն զայն և կալաւ փիշխանութիւն պատրիարգութեան և յորժամ հեռագաւ Յակոբ պատրիարգ աստի, առջա ըստ կանաց իւրեանց շարժիլ սկսան և զկարծիս իւրեանց հաստատել ի միջի իւրեանց: Վասն այնորիկ որքան լսեր և իմանայր զգործս նոցա անուղղայս, որ տարածանէր ի Կոստանդնուպօլիս ի մէջ իւրոյ ազգին, երկնէր

միշտ և հնարս որոնէր կրկին դառնալ ի պատրիարգութիւն իւր ի Կոստանդնուպօլիս, զի վրէժխնդիր լինիցի սրբոյ կրօնին մերոյ և պապանձեցուցէ զնոսա, զի մի ճարակեցի ախտն այն լամենայն անդամս եկեղեցոյն: Ուստի ի թուին ՌՄԱ (1752) զըլխաւոր իշխանն Եաղուպ աղայն գնաց յովստ ի յԵրուսաղէմ հանդերձ ընտանեօքն ի իմագուցեալ նմա զմիտն իւր և զխիղճն անհանդարտ լինիլն յայտնեալ նմա: Եւ նա իմացեալ զբարի միտն երանելոյն ի լետ դառնայն յԵրուսաղէմայ, կարգեաց ըզԹէոդորոս վարդապետն անդ պատրիարք և զՅակոբ վարդապետն երբն ընդ իւր ի Կոստանդնուպօլիս: Եւ յորժամ մերձ եղեն ի քաղաքս, Եաղուպ աղայն պատգամ յղեաց առ Գեորգ պատրիարքն Կոստանդնուպօլիս, զի ալլ առնիցէ զանձն և նա ոչ կարէր ընդդիմանալ նորին կամացն, իսկոյն կատարեաց զկամքն նորին և Յակոբ Աստուածաբանն կրկին նստաւ յաթոռն իւր և զԳեորգն լղեցին ի Պրուսայի առաջնորդութիւն: Եւ յորժամ նշատաւ՝ նկուն եղեն թշնամիքն իւր և երանելիս այս թէ քարոյիւ և թէ յայտնի և ծածուկ միշտ յանդիմանէր զնոսա և յաղթողական բանիւք յարածամ ընկճէր զնոսա: Մինչև որ փերեանց նման քահանայ ում յարուցին Մանուէլ անուամբ անօրէն՝ անխղճմտանք և տգետ ամենկին զըրպարտիչ այդ դիւքնակ: Եւ թիկնապահ լեալ նմա վաստ արարեալ փետտեալս ի մենջ զկաթոլիկ կոչեցեալսն, թէ Յակոբ պատրիարքն է որ թող տայ նոցա և ոչ ընկճէ զնոսա: Եւ գտեալ զնմանիս իւր տիպաճի տէր Սարգիս ում և զսպիրիչ Յօհաննէս ի նոցանէ դարձեալ և ետ արզուիալ թէ ազգ մեր յատիկանան թողատուութեամբն պատրիարքին մերոյ: Եւ արքունի սպասաւորօք երթեալ յեկեղեցիս ֆռանկաց յիսունէն աւելի մարդիք մատնեցին ի թէրսիսանաւն, որոց յոյժ ստորքն շատ հաւատով քրիստոնեայք էին քան զսոսա: Բայց թպետ զկնի երեսուն և երկու աւուրն ապատեցան: Իսկ նոքա ոչ կասեցան ի չարութենէ իւրեանց: Եւ բերեալ զՄանուէլն սաստէր պատրիարգն և խրատէր միշտ և ասէր՝ ինձ է պատշաճ ալս գործ և ոչ ձեպ, վասն է՞ր ալեկոծէք ազգն: Եւ նոքա ոչ զգաստանային՝ ունելով ի թիկունս իւրեանց զոմանս իշխանս անուղղայս յանդիմանեցեալս ի պատրիարքէն վասն եղեռնագործութեանց իւրեանց: Եւ նա յորժամ յուս տէր Մանուէլ և ընդ նմա եղեալքն թէ ի ֆռանկաց եկեալ է Յակոբ պատրիարքն յպնշխարս սրբոց շնորհ և պատկեր գեղեցիկ սրբոյ Աստուածածնի, որ իւր սենեկին կախեալ ունէր ըստ շերմեռանդութեան իւրում: Զի էր յոյժ շերմեռանդ առ սրբուհի կոյսն օգ[ո]ստափառ: Ի խոր խոցեցան և

սկսան յայտնի զինիլ այնուհետև և թուղթ ետ փաշային Ռահիպի վեպիրի արքային Մուստաֆայի, Մանուէլն ընդ միւտց, թէ բաթրիյիմիլ ֆրենկ օլտու իյերմի տետր քիշի յանուանէ պապարտելով, որոց միջնորդութեամբն թուղթ լինէ առ միմեանս պատրիարքն մեր և հոռմայու ֆռենկ բաբալեր-լան գրելով մատոց: Եւ վեպիրն խելացի լինելոյն և սիրելի պատրիարքն մեր նորա և միշտ յորժամ գայր ի Յիսարտիպի պալատն դատեր իւրում հանդերձ ծանր ընծափւք պատուէր և տեսանիւր ընդ վեպիրին և խօսակցեր ընդ նա և կարի սիրէր պատրիարքն մեր Յակոբ և յորժամ պատահէին միմեանց, երկարօրէն խօսակցէին յարածամ: Ուստի խելացութեամբ իմն ապառնաց ըպապտրիարքն մեր ի ծանեացն մատնչաց և ի սպառնալեացն արքային Մուստաֆայի: Քանզի բոլոր ազգն ի սասանման կային և օրըստօրէ երկնէր թէ ապա այժմ յուր կախեցման և կամ սպանման հասանելոց է յունկն մեր և որքան միաբանք ունէր պատրիարքն, ամենեքեան ցրողեցան և թաքեան ի տունս յապգականաց իւրեանց, որոց և քանիքն իսկ տեսաք ի Պալատ, յառաջնորդարանն Հրեշտակապետու եկեղեցւոյն. ՎԱւետիք եպիսկոպոսն Մէքիքճի կոչեցեալն, որ ի տան եղբօրն թաքեաւ և Կարապետն՝ փոխանորդ պատրիարքի, ի Խաւսգետ, պնչատ մահտեսի Պետրոսի տունն ղողեցաւ և Գրիգորն յերուսաղէմայ փոխանորդ, որ մեր թեկեղեցուք առաջնորդարանին դարանեցաւ շաբաթ մի առանց իջանելոյ յեկեղեցի: Եւ պատրիարքն կայր ի մէջ վարանման, և ապաւինեալ ի յօգոստափառ տիրուհին: Եւ ի նոյն աւուրսն ըմբռնել տուեալ էր Մանուէլն այր մի ի քսան և չորից Յոհաննէս աւուր, և կայր ի կոճեղս և հանեալ վայն յատեան իւր վեպիրն և հարցանէր թէ դու ինչ ապգ ես: Եւ նա՝ Հայ եմ, աւացեալ, և ըսէ՛ ձերդ մեծութեան: Ապա աւացեալ է փաշայն թէ՛ Վասն ձեզ ասէ երեցն ձեր թէ ֆռանկացեալք ես: Աս[ա]ցեալ է Յօհաննէսն՝ Հաշա, տէր իմ, սուտ է և պապարտութիւն ամենին և ունիմք թուղթ հարկի ի ծոցի մերում: Եւ պատճառն նորա զմեզ վերապարտելոյն, զի խնդրեաց զմեզ քանի մի անգամ պրտակ և ոչ ետուք, վասն այն բարութեան եղ ի վերա մեր և մատնեաց, զի մեօք երկեցուցէր վաշս այլոց և այսուհետև քամեսցէ վնասա տրկանման: Եւ փաշայն իսկոյն հրաման արարեալ պատուէր լիեաց գալ պատրիարքին մերոյ՝ վաղվաղակի գալ ի դռուն: Եւ ի հասանիլ նորա անդր և կոչեալ վայրն անդ առաջի իւր, և էհարց վապտրիարքն թէ Բաթրիք, ճանաչես զայրս այս՝ թէ հայ է: Եւ նա պատասխանեալ՝ Այո, տէր իմ, հայ է և հաւատարիմ ժողովուրդ իմ:

Նմանապէս միւս քսան և երիցն հարցեալ, նոյն պատասխանին տուեալ էր: Եւ դարձուցեալ զերեսս իւր փաշայն առ Յօհաննէս և աւացեալ է թէ զմեզ այժմ ոչ վկայիցէր պատրիարքն ձեր, բառնայի զգրուխն քո յանձնէր, նմանապէս և միւտցն: Արդ, համբուրեալ զմեռն պատրիարքին քո և նա մատուցեալ նախ զքղանձն հանդերձի փաշային հանբուրեալ և յետոյ զմեռս երանելոյն և ապառնեալ տէրամբ:

Եւ հարցեալ վեպիրն առ պատրիարքն թէ՛ Վասն է՛ր ի կրպակս և ի փողոցս կոխք լինին վասն օրինաց ձերոց, ընդ է՛ր հոգ չես տանիր և պատժէր վանցաւորս քո: Եւ երկրպագեալ պատրիարքին խնդրեաց զլիակատար իշխանութիւն, զի պատժել կարիցէր զայնպիսին: Եւ տուեալ նմա ըստ կամացդ արասցես և կազ և կոխ բարձցես յազգէր աւացեալ արձակեալ է: Եւս պատուիրեալ է պաշքափու քեաիիասի՝ յանձնարարեալ նմա զգործն պատրիարքին, զի գտանիցէր զՄանուէլն և զհաւախոսն նորա և պատուհասիցէր ըստ կամացն պատրիարքին: Եւ ի նոյն պահուրմունեցաւ սափրիչ Յօհաննէսն իւր ոտիւք եկեալ ի դռն փաշային և կալանեցաւ: Եւ տէր Սարգիսն գնացեալ յոտս պատրիարքին, մեղալ գոչեալ պրոյր վնասն ձրգեաց ի վերա տէր Մանուիլին և գնացեալ թաքեաւ: Եւ իմացեալ Մանուէլն, վաղվաղակի գնաց և ծածկեցաւ ի տունս մեծամեծացն մերոց և խնդրօղբն շատ որոնեալ կամօք պատրիարքին, բայց ոչ կարացին գտանել: Ուստի Քասպար ամիրայի տունն ևս կոխեալ ոչ գտին: Բայց ի մեծ պատի վերջի շաբաթն իւր տնէն ըմբռնեալ նոյն քաբու քեաիիասին ի ներքոյ դիպեալ անկողնոց և հանեալ անտի գան էհար վնա անդ տապաստ արկամբ ի գետնի և լղեալ ի կոճեղս չարաչար, և ի միատմ աւուրն աքսորեցին ընդ նմին և սափրիչ Յօհաննէսն և ի յերթայն՝ ղն Մանուէլն զգլխարկըն ի գետնի հարեալ, ոչ ինչ օգտեցաւ: Բայց միայն գան արքամար ստիպեցաւ ի յարքունի սպասաւորաց յերթալ ի ճանապարհ աքսորանաց:

Այսքան խռովութիւնք և խառնակութիւնք, որք եղեն յազգս մեր, բոլորն եղեն ի պատճառս մեծապանց ոմանց ի յազգես մերմէ, որք ոչ կարէին ըստ թիւր աղանդոց իւրեանց վարել զկեանս և յորսալ ի ծուղակս զայս ևս արքնութեամբն քաջ հովովս ապարիկ պատրիարքին մերոյ: Քանզի երբեմն ձեռամբ արքանեկաց իւրեանց բողոքեցուցին ի քաղաքին Մմիւռին, որ էր անդ հառուատ այր մի և էր իբրեւ անդ աղանդապետ նոցունց: Ոչ զանգիտեալ ի հարստութենէն Արքաիւմ վարդապետին՝ դիտի այնմիկ քաղաքի, բանադրեալ զայրն այն վարեաց ի քաղաքէն հոգևորական նպովիւք և արմա-

տախիլ արար վարքանական նորին: Եւ յորժամ ետես որ ոչ կարէ արմատացուցանել պիտույթին իւր, ել անտի և եկն ի Կոստանդնուպոլիս առ իւր համախոհ անձինս մեծամեծս և զանկատեաց յարթութենէն այցելոյն Վերահամ վարդապետէն: Եւ նոքա գիտեին զի քաղաքիս պատրիարքն վրէժխնդիր էր այսպիսի թիւր արարմանց իւրեանց և նորին պատուիրանօքն շարժէր Արքահամ վարդապետն անդ ի Չմիւռին և ըմբերանէր վնոսա վարդապետութեամբն իւրով, զոր ընկալեալ էր ի Յակոբ պատրիարքէն, ոչ կարացեալ տանել, և ոչ կարողանալին ի պատրիարդութենէն զրկել, թեպէտ ի ժամանակս Պոլսոյորոնին կարացին առնել, որպէս յառաջն պատմեցաք: Բայց յորժամ ձեռամբ լուսահոգի Եաղուպին եկն և նստաւ յաթոռն իւր, երաց պաշն իւր և իւր իշխանական գործն պատրիարքութեան ոչ առնէր ձեռամբ նոցա, այլ ինքնին հոգայր: Եւ լետ փաջայից իւր ժամանակին անձամբ երթեալ խօսէր և որքան գործառնութիւնք գոյր պատկանեցեալ ի գործ պատրիարքական ձեռօքն ինքն տեսանէր և բերանօքն ինքն խօսէր և ոչ կարօտիւր պապիրկեան պաշի մեծամեծացն մերոց: Վասն այնորիկ ոչ կարէին վնաս ինչ հասուցանել անձին նորա: Բայց միայն կարօտացան տէր Մանուէի արարմանցն որ որպէս վերն պատմեցաք, զայնքան գծողութիւն և վնասք հոգեկանք ի նոցանէ որդեցեալք: Բայց տէրամբ պատժեալ զկա ևս ընդ արքանեկօքն վրտաբանդի արար ըստ պատուիրելոյ առաքելոյն ետարձ պարն ի միջոյ ազգին և սարսեցոյց փետնոդս նոցունց: Քանզի մեծահանձար հայրս մեր, գերամեծար գիտութեամբ յառաջացեալ և սուրբ գրոց վահանաւ զինեալ օրստօրէ փառականկորոյս իւր սպառ ըստուր խորտակէր և ոչ տալի թոյլ աղանդատրացն բարձրացուցանել վեղջիւրս իւրեանց և խեղկել զգառինս, այսինքն զմիամիտ հաւատացեալս հօտին իւրոյ և փողոտիլ ի գալոց անաստուածից մարդկանց: Չի երանելիս այս լցեալ էր շնորհօքն Աստուծոյ և կարէր ըստ ամենայնի զգործս իւր յինքնէ յառաջ տանել քմարմնաւորսն, այսինքն զգործն մարմնական իշխանութեան ըստ պիտոյութեան աղապական տէրութեան, որոց ենք ընդ տէրութեամբ նոցա: Եւ ըստ հոգևորականին կարի լցեալ գիտութեամբ և պատառուն իմաստութեամբ, զի ի յարեթանէն իւրում պապանձեցուցանէր զիտնդաչս իւր և զարիւրեցուցանէր զընդդիմակա ուղիղ հաւատոյն մերոյ և փեսեալսն մեր, թէ ի յատենի և թէ գրեամբք իւրովք, զորս շարադրէր անյապաղ զկնի անձկական կրից և աշխարհային պրաղմանց, զորս տեղայր օրըստօրէ, ի բռնութեանց այլազգի տէրութեան, ի մի-

ջի որոց բնակիմք հակառակորդացն հաւատոյ և թըջնամեացն ընտանի անպգամացն մերոց: Միշտ յառաջանայր երանելիս զանական գրեամբք աստուածային գիտութեանց և ուղղէր բանիւք սուրբ գրովք, քան թէ սաստիւք մարմնական տէրութիւնք, զի ոչ կամէր վիսօթացեալ ոչխարն իւր ձգել ի ծանիս գայլոց պօշնամեացն հաւատոյս: Այլ ինքնին յանձանձէր զվերս նոցունց և ըսպեղանեօք սուրբ գրոց միշտ դարմանէր և անուշ իւղովք բանից սուրբ գրեանց պատէր զվեր խօթութեանցս ազգին: Եւ թէ երբեմն ցոյացուցանել երևեցուցանէր, զիշխանութիւնս մարմնական սաստիցն իւրոց առ ի երևեցուցանել զաչս ստամբակիցն, բայց իսկոյն զիջանէր ի տկարութիւն խօթացեցոյն և մի առնել այլս պատուիրէր, զի մի խապել մրէժխնդրեցից ըզձեռք ատելով զթիւրսն ուղղէր և ոչ կամէր մատնել ի յաշխարհային դատաստանս զեղբարս մեր զշեղեցեալս ի կրօնից մերոց, որպէս առաջինքն արարեալ են զապօրինաւոր խստութիւնս և իբրև ընդ անհաւատի և հերետիկոսի վարելով, սպանութեան և ուրացութեան հաւատոյ պատճառ եղեալ նոցա և զմնացելոցն առիթ լեալ են ի սպառ խըրցեցուցման և վասն այնորիկ պատառեալ զուշական անբիծ և անարատ կրօնին մերոյ և հակեալ ի յալ կրօնս հաւատակցաց մերոց: Վասն այնորիկ օտարացեալք և խրտեալք ի մէնք, ուստի յայնժամ որքան գուն գործարք աստուածայինք թեպէտ քաղցրութեամբ ոչ գային սարտուցեալքն այնորիկ ի ստիկս մօր իւրեանց սուրբ եկեղեցւոյ, յորմէ ծնելն և ծնանին յարածամ: Բայց երանելիս այս քաղցրաբնական վարդապետութեամբն իւրով և համեղածոր գիտութեամբ օրաւոր քարշէր զնոսա առ ինքն զկրճիմն բարձեալ երևեցուցանելով և զմիջնորմն ցանկոյն հակառակապիտութեան և նախանձուն քակտելով և անանդութեանց մերոց և անարատ կրօնին մերում պատուգութիւն վարդապետելով զանական մատենագրութեամբ իւրով, զորս լետպետէ շարադրէր ի պայծառապարդութիւն ազգին իւրոյ հայկազնոյ և զամենայն առարկութիւնս աղոց՝ լուծանէր և փողիղն մերոյս կրօնի յայտ յանդիման կացուցանէր և զթիւրիմացից զմիտսն ուղղէր և յանկուցանէր և ընդդէմ սնոտի առարկուցեանց ոմանց ըզփրոյ կապոյն լուծանողաց և անտելի զապս ցուցանողաց յաղոց հաւատակցանց արանց զբերանըս նոցին կարկէր թէ բանիւ բերանոյ իւրոյ ի յատենի և թէ աստուածաբնակ պերճութեամբ շարադրեալ մատենագրութեամբք իւրովք: Ուստի այնքան սաստիկ էր տենջն երանելոյս այնորիկ և շնորհօք հոգւոյն լըցեալ, որ իբրև ի սենեկի սրտին իւրում լցեալ էր զամենայն գրեանս

աստուածային գնորն և Կիլիկի, Կարդապետականսն և Կիմաստափրականսն և վկնի բազմաց հոգոց ազգին իւրոյ, որ և ի ներքոյ իշխանութեան դժուարակրօն ազգին և ի մէջ այլակրօն ազանց խառնիճաղանձից բնակելոց Պօլսոյ անվտանգ պահելոյ Կիւրսն ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ մանաւանդ: Միշտ անձանձիր ընթեռնոյր և յարածամ զգրեանս շարափիւսէր Կմատեանս մեծամեծս ի պահպանումն ազգին իւրոյ ի վերա աստուածաւանդ և յուսաւորչահիմն հաւատոյն, Կոր ի բնուստ անտի ընկալեալն էր և հիմնեցեալ ի վերա վիմին Քրիստոսի և սըրբոց առաքելոցն հաստատողաց հաւատոյն Քրիստոսի կալ և մնալ ըղձալոյ գուն գործէր և նախանձախնդիր իւրոյ հայրենի օրինացն եղեալ, հրով սիրոյ հոգւոյն բորբոքեալ, յուղղութեան պահել Կիւստն իւր փութայր: Եւ Կմատեան եկամուտ թիւր աւանդութիւնս, Կորս մտեալ էր յազգս ի տիմար վերակացւաց, միշտ յապաւէր բանի բերանոյ իւրոյ և ևս գրովք արձանացուցեալ յետնաեկից Կուղիղն յայտ յանդիման կացուցանէր: Վասն որոյ ի մերայնոց ոմանց հակառակ երևէր և այլոց ազգաց հաւատակցաց թիկնապահ առնօղի իբրու բամբասխիւր և Կճճարտութիւն յոչ սիրողաց եպերիւր: Որպէս և ի շեղեցելոցն մերոց կրօնից ոմանց և Կսիրոյ ճաշակն ոչ գիտողաց առիւր: Եւ ոմանք ի նոցանէ բամբասխիւր Կերանեփս այս յականջս միամտացն մերոց թէ ի մեր կողմն է պատրիարքն ձեր առ ի յորապ ըկտրիւմարս, ուստի ցրտանալին պարզամիտքն մեր: Բայց ինքն երանելիս միշտ սիւփիւր Կազգի իւր և հաստատէր ի հաւատ անբիծ և ի յուղիղ կրօն անջեղ ի սուրբ նախնե/ա/ց յուսաւորչացն մերոց: Քանպի վասն սորա տգէտք և անպիտան բարութ անձինք բազումս հակառակեցան թէ ի կեանքս իւր և թէ վկնի երանելի մահուան: Նմանապէս գիտուն վարկեցեալ անձինք: Կշռով կենցաղավարողքն ևս ոչ ամաչեցեալ ամենին ալեաց երանելոյս, և չկանգնեալ այնքան աստուածաբանական գերազկիւ յնորհացն և ամենահարուստ գիտութեան իմաստիցն և առատահեղ պերճախօս ատենական խօսիցն սրբոյս, անգոսնէին ուրեք ուրեք և եպերէին: Որոյ վարդապետութիւն էր արդիւնաւոր ըստ ամենայնի և բերրեղ: Եւ հեղինակ իսկ բազում գրեանց աստուածաբանական և մեկնութեանց սրբոց գրեանց և այլոց բարոյական բանից սրբոց վարդապետաց եկեղեցւոյ տեղեակ և անջիջանելի ջահ մերոյս սուրբ եկեղեցւոյ և այլովք գերազանց յատկութեամբ պերճացեալ Կորոց եթէ ասիցի աստ երկարի բանս մեր: Չի դիտաւորութիւն մեր է ծաղկաքաղ պատմել Կշրքնաղ գիտութենէ երանելոյս և Կազգա-

սիրութենէ սրբազան առնս այսորիկ: Եւ յայտնի առնել Կշարութենէ նախանձաբեկ արանցն բարութ, որք մախացեալք Կարեզակնափայլ վարա նորա ստուերաւ ստութեան իւրեանց, Կամէին խաւարեցուցանել: Քանպի յոմանց Կշարիս բազումս կրեաց, որոց բարեարութիւն յոգունս արարեալ էր ըստ այնմ որ բամբասեալ և ոչ փոխարէնն հատուցանէր: Եւ նման վարդապետին իւրոյ երկնաւորի՝ խնդութեամբ տանէր նախատական բանիցն թշնամեաց և ըստ Պօղոսի կամէր սակս իւրոյ ազգին աշխատիլ և Կբազում գրեանս իբրն կերակուր ջամբել տալ մանկանց եկեղեցւոյս մերս ազգի: Եւ թունաւոր խայթումոցն օձանքմանն թշնամեաց համբերութեամբ տանէր: Եւ բարեարութեամբն իւրով Կշարալուով բարս նոցա յաղթէր և վկայծակունս հըրոյ կուտէր ի գլովս նոցա և երբէք ոչ թուանայր ի ժրաշանութենէ գործոյն իւրոյ: Եւ երբեմնապէս Կիսանեալսն ի չարութեան գործոց, իւրեանց պատժէր սաստիւք մարմնականօք և երբեմն հոգևորօք, վկնի բազում խրատու և համբերութեան: Քանպի այնքան էր տենջ երանելոյս, որ ի մէջ Կբազմանց յոգունց Կիւր հոգևորական գործն ոչ յետս ձգէր և յեալ հեղինակ բազում մատենից, եթող վկնի իւր իշխատակ բարի և անջնջելի շաւիղ հետևողաց իւրոյն ճանապարհի:

Բայց անպզամացն այնոցիկ, որք ի յատկութեան ունէին Կայս վարդապետս, տորին նաև յոյսն իաւար թուէր նոցա: Եւ վատթար Կուրցատորութեամբ իւրեանց և դատողութեամբ բամբասէին և քամափող Կեհագոյն առնս այսորիկ ինէին, Կոր յԱստուծոյ Աստուած կոչեցեալ էր: Ըստ յայնմ թէ ԿԱստուածս ժողովրդեան քո մի բամբասեցես և դատելովն իւրեանց՝ յափշտակօղ դատաստանին Աստուծոյ Կինէին: Եւ չարակնեալ Կառատաբաշխութենէն հոգւոյն սրբոյ հեղման առ վարդապետս այս, որ էր նիւթ Կուարճութեան մերում ազգի, դարձուցանէին ի նիւթ չարութեան և նախանձոս ի յանձնիւրս իւրեանց: Եւ վասն ոչ ըստ մխորժակաց իւրեանց վարդապետելոյ անպզամաբար տրտնջէին և ձկտէին խնով Կաղթիւրն Կարգեաց նորա, և քամահէին Կերկն աշխատանաց երանելոյս և խաղապրամբ ընթանալով ի ճանապարհս անհարթ ատութեան գթէին և ի վիհս կորստեան և բամբասանաց անկանէին: Եւ չճանաչելով Կպատիւ գերազկիւ առնս այսորիկ, ի ծաղր և ի կատակունս շարժէին Կալ ազգ քրիստոնեայս, որոց միշտ ծիծաղեաղ լինեալք Կոչ պատուելով Կգիտունս ազգի մերում, որպէս ոմանց է սովորութիւն չար, դնել գիտնոց անուն կեղտ: Ըստ այնմ Կի հարքն մեր ամենայնքն այս աղետիւրս մաշեցան, քանպի

նախանձալույս անձանց նախնիքն որպես հատուցին անցեալ հարցն սրբոց և պայն կատարեցին երանելոյս: Ըստ այնմ բանի տեառն հարքն ձեր կոտորեցին զվարգարէս և հալածեցին և դուք ևս լցեք չկափ հարցն ձերոց, ուստի զփրկիչն հալածեցին ևս քիտաւօղն նորին զերանելոյս նոյնգունակ հալածել փութային:

Բայց գերաշնորհ այրս այս միշտ արծարծէր զպարգևան հոգւոյն, զոր փութին ընկալեալն էր և զքանքարն շնորհեալ ինքեան ոչ ծրարէր ի վարջամակի: Չի բան վարդապետութեան նորին միշտ նկուն առնէ քիտեւորէր անորոքութիւն, որ ընդդէմ սրբոյս եկեղեցւոյս մերում և յաղթողական առարկութիւնք նորա, օրբատօրէ պարտեալ նուաճէ քիտաւօղնական թիւրակրօն արարնց զվիճմունան և զլուսաւոր հետ նորա հորդէ յարածամ ի ճանապարհն ուղղութեան անտարակոյս ընթացուցմամբ վարդապետութեան և վարդապետութեամբք նորա զրահաւորեալս որ իբրն զպատուական ծաղիկ միշտ բուրէ զանուշահոտութիւն վարդապետութեան նորա, քանզի ազնիւ էր իմաստութիւն և անճամբի զհաւաքն երանելոյն, զի գերահրաշ վարդապետութիւն սրբոյս խոցոտէին զսիրտս նոցա, որոց մեծագոյն էր ատելութիւնք ընդ սա և զայլ գերադրական գործք սրբոյս մի ըստ միոջէ ասել ինձ անկար գոյով, լռեցից:

Յամի Տեառն 1764²², իսկ յաբեթական տումարի ՌՃԺԳ յուլիսի ԺԹ (19) և սէֆեր յունի 3, յաւուր Բ (2) շաբթի, որ էր երկրորդում օր վարդապառօնի՝ սոյն երեկոյիս շուրջ ԺԲ (12) ժամաւ աւանդեաց քիտգին իւր առ ալն յորում փափաքէրն և ցանկալոր ի տեղին երանելեաց պատրիարքն Կոստանդնուպոլսոյ Յակոբ մեծ վարդապետն Աստուածաբան:

Եւ ի միւս օրն՝ որ էր Գ (3) շաբթի և վարդապառօն երրորդում օր՝ շուրջ զերեք ժամաւ ի Պէյօղլի կոչեցեալ գերեզմանատունն ի դիր հանգրստեան գերեզմանի եղին հանդերձ յոգնապաղատ մաղթանօք և խաղմոսանուագ երգածայնութեամբ առնութիւն մեծի քահանայապետի դամբարանի Յակոբայ սրբոյ կաթողիկոսի և բազմութիւն անձանց էր խտացոյն կարի բազում յոյժ թէ վարդապետաց և թէ քահանայից, թէ իշխանաց և թէ ժողովրդոց, թէ կանանց և թէ մանկանց, որք եկեալք էին ի թաղումն երանելոյն, զոր տէր լուսաւորեցէ քիտգի իւր և հանգուացէ փ խորանն յունեղէն և արասցէ դասակից և պակակից ընդ սրբոց հայրապետացն. ամեն:

Եւ որոյ օծողն և ի գերեզմանատունն զկարգն հոգեհանգստին կատարօղն էր վե-

րոգրեալ նուիրակ քաջաքարոյ Յարութիւն վարդապետն:

Եւս զբազմութիւն ժողովրդեան փոքր ինչ անօտարացուցանելոյ և ցրուելոյ և հեռացուցանելոյ յաղագաւ որ առնութիւն գերեզմանին էին համակուտակեալք և շուրջ զնովաւ համախմբեալք ի նոյն պահն, մինչդեռ կատարիւր կարգ թաղմանն, հնարս իմացեալ հրաման արար պատրիարքն Գրիգոր, զի զՍառաֆ օղլու Սարգիս վարդապետն Շնորհալի փոքր ինչ տարակաց եկեալ ի վերա միոյ բարձրագոյն գերեզմանաքարի կաւ մեծաւ հառաչմամբ և սրտառուց կերիւ, արտասուաթոր աջօք և հեկեկեալ ձայնիւ աւաղել և ողբալ զմարդկային բնութեան լայրծիւն և անկալուն փնիլն ի վերա երկրի և միշտ ի հոսման և ի ծորման գոլն՝ ի սկզբանէ մինչև ցկատարած և զաշխարհիս ունայնութենէն և զսին սաղարթիւք պաճուճեցեալ զինեղութենէն ևս և յունայն և ի նանիր իբր առ աջօք եղեալ քիտեւորութենէն դորովեալ ամբաստանեաց՝ բերելով զօրինակս շահաւետս և զանակս օգտատուս և զխրատս: Եւ յետոյ զմիայն գովասանութեան միանդրն և նպատակն և օգտաբեր շահաւետութեան արժանին և ընդունելին, այսինքն զաստուածային առաքինութիւնս՝ գովելով գովեաց և ներքողեաց և այսու կերպիւ մխիթարեաց՝ արիւնքեաց և զովացուցեալ ապահովացոյց զժողովուրդն սակաւիկ ինչ:

Եւ յաղագս հանգուցելոյն սկսաւ ասել արապէս. Եղբարք իմ սիրելիք, ահա արդ տեսէք մեր մեծապատիւ և սիրելի հոգևոր սրբապան հայրն յուսահոգի՝ թէ որպէս վճարեաց ըզկեանս իւր և զմեզ զամենայնս որբացոյց իրաւի և կաթոզեալ միջաբեկս արար: Եւ արդ՝ տեսէք թէ որպէս ակունքն իւր լուսաւորք զորս ունէրն երեկն և եռանդն՝ այժմ դադարեալք են ի տեսանելոյ, բերանն ի խօսելոյ զաստուածային քարոզութիւնսն վարդապետելոյ, ևս՝ յօրինելոյ զմեզ լռեալ են աւասիւ: Տեսէք և այժմ և զձեռն որ ոչ կարէ վերացուցանել և խաչակնքել զձեզ և ասել առ ձեզ՝ Խաղաղութիւն ընդ ձեզ, նն: Եւ ականջքն ի լսելոյ զշերմեանդ աղօթքն ձեր և առ Աստուած մատուցանելոյ (իբրն քիտեւորակն Կունելեալ): Արդ՝ զրկեալք են ի լսելոյ և խըցեալք զգալապէս և ոչ որչափ առ Աստուած իմանալաբար: Եւ ինքն իսկ բոլորովիմբ զրկեցեալ է ի համայնից զգալութեանց և շարժութեանց և բովանդակ դասուց եկեղեցականաց ի հոգևոր պարերգութեանցն, ևս ձեզ նման հոգևոր և սիրելի որդեկացոյ ի տեսութենէն հեռացեալ մեկնեցաւ աչաօր: Ուրեմն պարտիք և դուք վաւրն նորա Աստուածն գորովագութ ջերմեանդապէս աղօթք մատուցանել, զոր միսի-

թարիչ հոգին սուրբ Աստուած զձեզ և զմեզ մխիթարեսցի և փողոց երանելոյ պատրիարքս այսորիկ ի լուսեղեն խորանան ընդ սրբոց իւրոց զմայեցուսէ տեսութեամբն իւրով:

Եւ վերջապէս իւրաքանչիւրն գնացին ի բնակութիւնս իւրեանց աւաղելով և կոծելով զանձինս իւրեանց, զի զրկեալ գտանեցան լայնժամ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հայկ Պերպերյան, Նյութեր Կ. Պոլսի հայոց պատմության համար, Վիեննա, 1965, էջ 59—94:

2 Անդ, էջ 63:

3 Անդ, էջ 64:

4 Թվականը սխալ է: Ռ-42-ի փոխարեն պետք է լինի Ռ-Ա (1622), քանի որ 1617 թ. թուրքական սուլթանը ոչ թե Օսման Բ-ն էր, այլ Մուստաֆա Ա-ն (1617—1618 և 1622): Երկրորդ, Սիմեոն երեցը գիտի Օսման Բ-ի մահը, որը կատարվել է 1622 թ.: Նա իր հիշատակարանը գրել է Օսմանի մահից անմիջապես հետո և Մուստաֆա Ա-ի երկրորդ գահակալության ժամանակ, որը տևեց ընդամենը 150 օր՝ մինչև 1623 թ. հունվարի սկիզբը:

5 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 10721, էջ 51 ա:

6 16-ի 1-ը գրված է մատիտով:

7 Մատիտով 2-ն ջնջված է և լուսանցքում զրկված Մ:

8 25-ի 2-ը մատիտով ջնջած է և դարձված 1:

9 Դ-ն մատիտով ջնջված է:

10 Չեռագրում 1185 է, որը սխալ է: Ուղղում ենք 1195, քանի որ 1195-ի հունիսի 2-ն է եղել երեք-չարթի:

11 Մատենադարան, ձեռ. 10721, էջ 49ա—բ:

12 Անդ, էջ 50ա—բ:

13 Անդ, էջ 73ա—82ա:

Այս հատվածն ունի ճանաչողական որոշակի արժեք: Այն նվիրված է պատրիարքական աթոռի շուրջ բոլորովն վեճերին, որոնց համար հիմնական շարժառիթը հոգուտ պատրիարքարանի գանձվող տուրքերն էին: Այսպես, ամեն մի հոգևոր առաջնորդից գանձվում էր 600 դուռուշ, «յէնկիւրիոյ» 200, սոյն-գունակ ի Թօզաթէ, ի Տիարպէքիւրոյ, յԼրիայէ և Սևաստոյ, ի Դրապպոնէ, ի Կիւմիջխաննէ և այլոց՝ որք են յԱնատոյու...» (Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն 2-րդ, Եվ-

րոպա, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 117): Եթե պատրիարքների զգալի մասը այս դրամները օգտագործում էին հոգուտ իրենց ժողովրդի (եկեղեցիների վերանորոգումներ, դպրոցների բացում, գրքերի տպագրում և այլն), ապա մի մասն էլ կաշառքով ձեռք բերելով այդ պաշտոնը, մտածում էր միայն իր շահի մասին:

Պատրիարքների հաճախակի փոփոխությունները շատ կպաստավոր էր թուրքական արքունիքին: Դրա պատճառը այն եկամուտներն էին, որոնք գանձվում էին պատրիարքից: Այսպես, «Ընծայ կամ տուրք պատրիարգին զոր ունի տալ ի գանձն արքունի, սահմանեալ է ի հրովարտակի նորին 100 հազար փող (այսինքն ստակ), յորժամ առնու պատրիարգութիւն. և 140 հազար փող յուրաքանչիւր ամի, զոր տալ ի դուռն տէֆթէրտարին. թող և զայլ ձեռագիրս զոր ունի տալ ոմանց ի նոյն դուռն, որով համօրէն տուրք իւր լինի 1244 դուռուշ: Յորժամ նոր վէպիր առնու վիշխանութիւն՝ ունի տալ 500 դուռուշ, իսկ յորժամ վէպիր քեահեասի՝ 250. և յորժամ Չավուշ պաշի՝ 200, հանդերձ այլևս ընծայիւք կերպասոց և 40 դուռուշ չափ աստ և անդ» (Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 117):

Ինչպես մեր այս հատվածում ևս տեսնում ենք, թուրք իշխանավորները ոչ միայն աշխատում էին որքան հնարավոր է արագ փոխել պատրիարքներին, այլև դա կատարում էին իրենց համար սովորական բռնի միջոցներով, անգամ ենիջերիական պատժիչ զորք ուղարկելով իրենց թեկնածուին պատրիարք նշանակելու համար:

Ահա այս պատճառով էլ պատրիարքական աթոռին լուսավոր մի շարք հոգևորականների կողքին (ինչպիսիք են Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին, Հակոբ Նայանը և ուրիշներ), նստել են նաև այնպիսիները (օրինակ՝ ոմն Կրպո), որոնք իրենց խայտառակ գործունեության պատճառով թողել են տխուր անուն:

14 Քեզ չենք ճանաչում:

15 Չենք ուզում:

16 Անհավատներ, դուք թագավորի հրամանին դե՞մ եք դուրս գալիս:

17 Մի խփիր:

18 Ինչու ես խփում:

19 Սրբազան հրաման է, պետք է ենթարկվել ալլախի հրամանին:

20 Վայ գլուխս:

21 Վայ թևս:

22 Մատենադարան. ձեռ. 10721, էջ 63—65ա:

